զուին ու գրութեանը մէջ անանկ պարբե-
րութիւն մը եւ զրուցուածք մը ըլլայ որ

է որ՝ Բահանայք՝ մեր նոր լուսաւորուած վարդապե-
տին կարծիքին պէս, իրենց վաճառքը (այսինքն, ըստ իւր
ամբաստանութեանն, մեղաց արձակումն չնորհելու անշ-
նակն իշխանութիւնը) հոտած ու մզլտած, կամ վրանին
մնացած վաճառիկի մը պէս՝ սուղ կամ աժան՝ անոր ա-
սոր վրան ձգելու համար ձեռքերնին առած՝ փողոցէ
փողոց կ'ըջին, աս կամ ան մարդուն էին՝ ինչի խոսքովա-
նէ՝ յէջ արձրիւ ըսելով՝

Արդեօք գիտէ՞ թէ ի՞նչ կերպով գործի կ'ըրուի,
եւ ի՞նչ փաստերով հաստատուած է այս արձակումը:

Այո՛, գիտէ՛. եւ այս խօսքերս ալ քննութեան առած
է իր տետրակին մէջ՝ (առջինը՝ երես 17 20 եւ Բ
գրեթէ ամէն երեսներուն վրայ) բայց Աւետարանը իր
մտքին քաշկռտելով: Չասն որոյ ես ալ քանի մը խօսք
պիտի խօսիմ ասոր վրայօք, իր խօսքերը քննութեան
առնելով:

« Հիմայ կ'մնայ հարցնել թէ՛ — կ'ըսէ — Առէք Հո-
ղին սուրբը ըսելով առաքելոց տրուած իշխանութիւ-
նը չ'է՞ որ անոնց յաջորդներուն ալ անցաւ:

« Աս հարցման մենք կարճ կերպով Ո՛չ՝ կ'պատաս-
խանենք, (Ենչ ալ երկար իերպով ԱՅՈ՛ պիտի ըսենք) եր-
կու պատճառաւ: Նախ, աս իշխանութեան սրբազան
պաշտօնը վարելու յարմարութիւն ունենալու համար՝
այն ընտրեալ առաքելոց ունեցածին պէս Սուրբ Հո-
ղին ունենալու է . . . եւ թէ որ անանկներ ըլլայ որ
զրուցեն թէ, Անտարակոյս՝ . . . աս Աստուածային յա-
տուկ Պարգեւը յաջորդաբար առաքելոց անտի եւ ա-
նոնց պէս մեզի ալ եղած է եւ կ'ըլլայ: Ուրեմն ը-
սածնին թող ցուցնեն՝ կ'ըսենք, անոնց ըրածին պէս
մեծասքանչ գործքերով . . . եւ այն (երես 38)

Աս խօսքերս մենք եղծած ենք մեր 34 եւ 35 ե-
րեսներուն վրայ . իսկ հոս խօսքը չ'երկարելու համար
աս խնդիրը միայն կ'ընենք: Արդեօք Նկեղեցիին մէջն

«անի Տը միտքեր եւ կերպ կերպ խօսուածք-
ներու իմաստներ ունենայ կամ ամփոփե-
իր մէջը , պարզաբար անոր ինչ «մէկ»
միտք մը ու «մէկ» իմաստ մը ունենալը
ցոյց տուէր էինք , (Տես 'ի Չատագովու-
թիւն բան խրատականին . երես 33) (Իայց
Մատթէի Աւետարանին մէկ Մէկնութիւնը

բոլորովին վերցած է հրաշագործութիւնը : . . .

«Երկրորդ , մարդոց ասանկ իշխանութիւն մը ունե-
նալուն՝ —կ'ըսէ — ալ կարօտութիւն մնացած չ'է . եւ
«եթէ ունենան ալ , անիկայ բանեցնելու տեղ չ'կայ» :
. . . (երես 37—39)

Հ իմայ ես ալ իրեն կ'հարցնեմ թէ՛ ինչո՞ւ — աս իշխա-
նութիւնը բանեցնելու պէշ չ'կայ , թէ թէ Տարդիային Տղան-
չանն բնութիւնը անՏղանչաննի՞ փոխուեցաւ : Գիտեմ ,
ասոր Ո՛չ պատասխանը պիտի տայ Քրիստոսի՝ «Առէք
«Հոգին սուրբը , թէ՛ որ ոմանց մեղքերը թողուք՝ թող-
ուած ըլլայ անոնց . թէ՛ որ մէկունը ետ բռնէք՝ բռ-
նուած ըլլայ» (Յովհ . 20 . 22—23) խօսքերը իր ու-
ղածին պէս մեկնելով :

Ես հիմայ առանց իր մեկնութիւններուն ուշադիր
ըլլալու կ'հարցնեմ իրեն՝ ու իր կրօնակիցներուն , թէ
Ա . Ամէն մարդ Հոգին սուրբը կ'ընդունի՞ թէ չ'է , թէ
որ սրտանց կ'փափօքի ունենալու , եւ հրապարակաւ ու
Նկեղեցեաւ կ'աղօթուի անոր վրայ :

Բ . Թէ որ կ'ընդունին՝ ինչու իշխանութիւն չ'են
ունենար քահանայք Առաքելոց ունեցած իշխանու-
թիւնը վարելու ,

Գ . Քրիստոս կ'ըսէ որ «Թէ որ ոմանց Տղերը Բո-
ղոս . կամ ետ բռնէք» , ինչու համար աս խօսքերը
ուրիշ բաներ կ'նշանակեն կոր :

Դ . Աս խօսքերը՝ իրենց Հոգեկորոյս հոշած Տակաբե-
րութեանը դէմ չ'իջար կոր :

բատ դիպաց ձեռքերնիս անցնելով* որ
տաճկական լեզուով շարադրելու բարե-

*Միայն Տէկնո-ւի-ն բառը լսելով կրնանք իմանալ որ հասկնալը չիլ է իմ շատ կերպով Գծո-ար շրո-ցո-ած չի իմ ոճի ճը Բայցարո-ւի-նը իմ յայտնի կերպով անոր Տիպը Բայց ոչ Գրո-ւի-ն ճըն է Վասն որոյ՝ աս գիրքը ձեռու-րնիս անցած ատեն մեծ փոյթով կ'ճէպէ ինք կարդալու՝ սուրբ գիրքէն մեկ քանի չ'հասկցած տեղերնիս հասկնալու համար: Բայց անկեղծութեամբ կ'խոստովանինք որ կարդալով իմացանք թէ Տէկնո-ւի-ն կոչուելու արժանի գիրք մը չ'էր եւ չ'է: Վասն զի չ'է թէ իմ չ'հասկցածներս բացայայտ չ'էր մեկնէր, այլ նաեւ շատ պարզ կերպով հասկցածներուս ալ անանկ մեկնութիւններ տուած էր՝ որ զիս վարանքի ու տարակուսանաց մէջ թողուց: (Ասոր մէկ քանի օրինակները ցոյց պիտի տանք՝ թէ որ աս տեսրերուն յաջորդներն ալ հրատարակելու ձեռք զարնէնք): Ուստի չ'կրնալով շատ համբերութիւն ունենալ, բողոքական վարդապետի մը հարցուցի, (Գուցէ զայս կարդացողը հիմայ ինքն ըլլայ, եւ գրիչը ձեռքը սխալու բռնելու ջանք կ'ընէ), թէ ինչո՞ւ համար Կաթիլերէն լեզուով շինուած էր աս Տէկնո-ւի-նը: Պատասխան տուաւ «Որովհետեւ Եղբայր, ազգերնուս մէջ խիստ շատերը «կան՝ որ իրենց մայրենի լեզուն չ'են գիտէր: — Բայց «չ'եմ կարծէր, ընդ-Տիշեյի եր Խօսքը, որ ընդհանրապէս «Հայերէն գիտցածնուն չափ՝ տաճկականին ալ այդչափ «աղէկ տեղեկութիւն ունենան: Ուստի այդ գիրքը՝ ա- «ւելի տաճիկներուն օգնութիւն կ'ըլլար, (աս խօսքն ալ «հիմայ կ'յաւելցնենք. է- անանկ ըլլալու պէտք էր, որով- «հետէ- Տիշը պարո-նակեալ Ճշմարիտ կարծո-ած վարդապետ- «արո-ւի-նները՝ մճբող Սարո-ւի-ններ էն, է- Հայք Բնա- «չ'են ընդո-նից) թէ որ տաճկերէն գրելով տպուած «ըլլար, քան թէ Հայերուն տգետ մասին՝ որ ատոր հա- «զիւ մէկ քանի բառերը կ'հասկնան: Չ'է, թէ որ «Հայերուն՝ մանաւանդ տգետներուն օգնել էր Հեղի- «նակին միտքը նէ՝ պիտի պարտաւորէր իր Մեկնու-

հաճէր էր անոր պատուարժան չեղինա-
կը , Որչափ զարմացայ ան զրուցուածքէն

,,Թեանն ալ Ռինո-Րի-ն Տը շինելու : — Ատիկայ ատանկ
 ,,ըլլայ նէ , պատասխանէց , ձեր հարանց գրածներն ալ ոչինչ
 ,,եւ անօգուտ են ազգին . ինչու որ դժուար է հասկնա-
 ,,լը , բոլորն ալ գլխովին գրաբառ ըլլալուն համար : Իսկ
 ,,մերը՝ ասոնցմէ՞ ալ մի գէշ է՝ որ տաճկերէն գրուած
 ,,ըլլալով ամէն մարդ կ'հասկնայ : — Գուն ատոնցմով ի-
 ,,րաւունք ունենալ կ'ձեւանաս , իրիւնցի , բայց ատանկ
 ,,չ'է : Մեր հայրերը զանոնք գրած ատեննին՝ Հայերէն
 ,,լեզուն հիմնական պէս հինգ վեց լեզուէ բաղադրու-
 ,,եալ Եւրոպական լեզուին (այսինքն , Գրան , Խոշո-
 ,,ւէշո-ի) չ'էր նմաներ , ոչ ալ ասկէ մէկ քանի տարի
 ,,առաջներուն պէս գրեթէ կորսուածի պէս , այլ՝ աշ-
 ,,խարհիկ լեզուն ալ չ'էին գիտեր , եւ առ հասարակ գը-
 ,,րաբառ կը խօսէին եւ կ'գրէին . վասն որոյ իրենք ալ
 ,,գրաբառ գրելով ժողովուրդին հասկցած լեզուովը գը-
 ,,րած եղան : Իսկ հիմայ՝ որ շատ եւ շատ քիչերը կը
 ,,գտնուին պարզ աշխարհաբառ շարադրութիւն մը չը
 ,,հասկցող , ան ալ տաճկերէնէն շատ աւելի աղէկ , պէտք
 ,,չ'էր որ ազգին աւելի մեծ ծառայութիւն մը ընելու
 ,,համար՝ ամենուն հասարակ եւ սովորական եղած լեզ-
 ,,ուովը շարադրուէր այդ մեկնութիւնը . նա մանա-
 ,,ւանդ՝ որ ասանկով կրնար ըլլալ ազգին ծառայել , ո-
 ,,րովհետեւ հարիւրին մէկը՝ տաճկերէն չ'են կրնար կար-
 ,,գալով հասկնալ ատիկայ : — Աս ստոյգ է . . . Իբրեց
 ,,խօսես , . . . չեղինակն ալ միտք մը ունենալու է . . .
 ,,Բայց ամէն մարդ կրնայ հասկնալ այդ լեզուն : Տաճ-
 ,,կատանի մէջ եզտը բոլոր Հայերն ալ այդչափ կրնան
 ,,հասկնալ . . . — Ատիկայ չ'կրնար ճշմարիտ ըլլալ պա-
 ,,տասխանէցի , որովհետեւ ոչ ես՝ ոչ ալ ուրիշ որ եւ իցէ
 ,,կարգացողներ չ'կրցանք կատարելապէս չեղինակին
 ,,միտքը հասկնալ . մանաւանդ ամէն ընթերցող վարանդի
 ,,մէջ կ'իյնար , ծուռ մեկնութիւններէն զատ՝ որ տուած
 ,,էր , քանի մը միտքեր պարունակելուն համար : Աերջա-

Տէի ուրիշ չըրոյցուած ճշեւած ըլլալը տեսնելուս: Ուստի՝ իմ զարմանքս բոլոր ազգակիցներուս ալ հաղորդել ուզելով՝ պարտանձին համարեցինք աս կտորը թարգմանութեամբ հրատարակելու: Բայց որպէս զի ակամայ սխալմունքներէ ազատ ըլլանք, (որովհետեւ փաճկական լեզուին Տէջ Բասկան փխր ըլլալու էնք, որուն կ'յուսան որ ազգակիցներս պիտի ներեն) տաճկերէնն ալ մէկ տեղ կ'հրատարակենք:

«պէս՝ ես միայն իր դիտաւորութիւնը քիչ մը հասկցայ՝ որ սուրբ գիրքերը ուրիշ լեզուով խանգարել էր: Ի՞նչ կ'կարծես, Հայերէնի՞ն, չէ՞նէ Տաճկերէնին մէջ այնչտփ հարուստ բառեր ըլլան Եկեղեցական ու կրօնական նիւթերու վրայ խօսուած ձառ մը մեկնելու համար»

Միտքս չի դար, ու չ'եմ կրնար ալ բերել, թէ ի՞նչ պատասխան տուաւ աս խօսքերուս . բայց աս գիտեմ՝ եւ ստոյգ ալ է՝ որ իմ ականջս ուրիշ ձայն մը լսած չ'ունի:

Ուրիշ շատ բողոքականներու ալ հարցուցեր եմ ասոր վրայօք, եւ ամէնքն ալ հաստատութեամբ զրուցեցին՝ որ աւելի Հայերէն պետք էր շարադրուէր այդ գիրքը: Բայց չէր ըլլար, որովհետեւ իր խորհրդատուութիւնները յայտնի պիտի ըլլար:

(Faint bleed-through text from the reverse side of the page, including words like "այսինքն", "ստորագրել", "հարցուցի", "պատասխան", "տեսնելու", "հարցուցի", "պատասխան", "տեսնելու")

ՄԱՏԹԻՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ
ԵՐԵՔ ԳԼՈՒԽ ՎԵՅ ՀԱՄԱՐԻՆ ՎՐԱՅՕՔ
ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ ՄԵԿՆԻՉԻ ՄԸ
ՏՈՒԱԾ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Յովհաննէսին վա՛ղը իլէ
ինսանլարըն ա՛գլընա պիր
Ալահանի թէսիր կէլէ-
րէք շօգ քիմսէլէր քէն-
տիլէրին կիւնահ քեար հա-
լինի կեօբմէյէ ույանմըշ-
լար ըտը վէ օնլար՝ քէն-
տի կիւնահլարը իչիւն
է՛օզիւր տիլէյէճէք եէ-
րինէ քէնտիլէրինի թէօհ-
մէթլի սայմագ հայինէ
կէլտիքլէրի վագըթ, եա՛-
նի օնլար թէվպէ էտէ-
րէք գապահաթլը օլուպ
ա՛ֆվէ մուհթաճ՝ մուր-
տար օլուպ թէմիզլէն-
մէյէ մուհթաճ օլտուգ-
լարընը կիւնահ իլէ քէն-
տիլէրինի խարապ վէ պէր
պատ էտիպ՝ պիր Գուր-
թարըճը յա մուհթաճ օլ-
տուգլարընը իգրար վէ
ի՛թրաֆ էթտիգլէրի
թագտիրտէ, հեմ տախի
քէնտի եարամագ եօլա-
րընը վէ եարամագ ֆի-
քիրլէրինի թէրք էտիպ
փէք եագըն պիր գէման-
տէ կէլէճէք օլան Մեսի-
անըն թալիմաթլէրինի վէ

Յովհաննէսին քարողու-
թիւնովը մարդկանց մըտ-
քին մէկ Աստուածային
ազդեցութիւն մը գալով
շատ մարդիկ իրենց մեղ-
սալից վիճակը տեսնելու
արթնցած էին եւ անոնք՝
իրենց մեղքերնուհ հա-
մար թողութիւն խնդրե-
լու տեղը ինքիրզինքնին
յանցաւոր համարելու վի-
ճակին եկած ատեննին,
այսինքն անոնք ապաշխա-
րելով թողութեան կա-
րօտ յանցաւոր՝ մաքրուե-
լու կարօտ աղտեղի ըլ-
լալին՝ (եւ) ինքիրզինք-
նին մեղօք ապականած
ու աղտոտած ըլլալով
Փրկիչի մը կարօտ ըլլալ-
նին խօսքով ցուցնելնուհ
եւ խոստովանելնուհ, ու
նաեւ իրենց անշահ ճամ-
բայներնին եւ (անշահ)
միտքերնին մեկդի ընելով
խօսք տալերնուհ՝ որ շատ
մօտ ատենի մը մէջ գա-
լու (եղող) Մեսիային
սորվեցնելիքներուհ ու
(Իր) առաջնորդ ու թեա-

«գուլաղուզուզուղունա քէն
«տիւլերինի թա'պի էտէ-
«ճէքլերինի իգրար էթ-
«տիւլերի թագտիրտէ, օ
«գէման Յովհաննէստէն
«վաֆթիզ օլուրլար ըտը»
.....

«նը պիտի հնազանդին,ան
«ատեն Յովհաննէսէն կը
«մկրտուէին»:

(Երես 37. էջ. 1-2)

(Աս կարդացողը՝ պէտք է վերի «մուլար
«դրութեանց շերքիչէն» բերած խօսքեր-
նուս հետ բաղդատէ, եւ անգամ մ'ալ
տեսնէ թէ Եկղեսիաստիկես ինչ կարծիք
ունի ասանկներուն վրայ. «Մեղաւոր փոր-
«ձի յերկլեզուութեան» 5. 11)

Աս Մեկնիչը՝ (որուն ծ- - - - - Թի-ն-
նէրը «- ԲարգՏանո-Թի-ննէրը ուրիշ ատեն
շատ պիտի ցուցնենք) չ'եմ գիտեր ո՞ր գիր-
քէն՝ կամ ո՞ւսկից սորված է թէ՛ անոնք՝
չիբենք՝ Տէչերէ «բիւլ- հասար «ՓրկիՉի
«ՄԸ ԿԱՐՕՏ ԸԼԼԱԼՆԻՆ Կ'ԽՈՍՏՈ-
«ՎԱՆԷԻՆ» ըսել է Մատթէոսի այն
խօսքերը: Արդեօք իր հոգի՞ն անանկ սոր-
վեցուցեր է իրեն: Մի Ե՛ղբայր, չ'ըլլայ
Թող ատիկայ. ուրիշ է «իբենց Տէչերը կը
խոստովանէին» ըսելը, եւ ուրիշ է «Փրկէ՛է
«Տը իարօփ ըլլալնին» կ'խոստովանէին ըսել-
ը. կամ «իբենց անչա՛հ ճամբայներնին եւ
«միտքերնին թողելով՝ շափ Տօփ ասենի Տը

» Բէջ Գալու Մեախային . . . առաջնորդութեանը
» հնազանդիլ » խօսք կուտային ըսելը :

Ատ մէկ ցնորք մը կամ երազ մըն է՝ որ
զինքը կամովին կ'պատրէ, ու կ'կուրցնէ՝
սուտ յոյսի մը համար, եւ այն ինքն է՝
իւր շնորհած Բէյ խորհուրդը հերձելու չափ
»-ժով (դուռն կ'ուզեսնէ « դատապարտելի »
իմացիր), իւր յեռու ժապարակով ունենալը կ'ե-
րազէ՞ արդեօք այդ մէկնիչը, դժբաղդա-
բար՝ երազն ալ գիշերը կ'ըլլայ . ուրեմն
տեսիլք կ'տեսնէ, որ սուրբ Տառերուն
այնչափ վեճ եւ ճիշտ ու հարապատ մէկնու-
թիւններ կուտայ :

Անանկ ճշմարտութիւններ ալ կ'պարունա-
կէ իր գրութիւնը՝ որ ԲՈԼՈՐՆ ԱԼ ՍՈՒՐԲ
ՀՈԳԻՒՈՒԼ ԳՐՈՒՄԻՍԻ ԸԼԼՈՒԿ Կ'ենթադ-
րուին . որոնց համար ինքը ասանկ կ'մաղ-
թէ . « Հոս գտնուած ամէն մէկ ճշմարտու-
» թիւնը՝ Սուրբ Հոգևով՝ եւ ճշմարտու-
» թեան Հոգիին հետ մեկտեղ * ընթեր-
» ցողին սրտին հասնի » . (տես Ե)

* Հեղինակին առ խօսքերուն մէկ մեկնութիւն մը տալ
հարկ ըլլար նէ՝ ամէնէն առաջ մենք պիտի ըլլայինք
աս պաշտօնիս ձեռք զարնող, իր խօսուածքէն՝ սարսա-
փելի հետեւութիւն մը հանելու համար . այսինքն, ըն-
թերցողին սրտին ինչով պիտի հասնի անոր մէջի եղած
ճշմարտութիւնները, ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՈՒԼ . ուրիշ չ'նշով .

Անանկ է նե, որովհետեւ Սուրբ Հոգիին ճշմարտութեամբը խօսած է ասիկայ, անշուշտ մէջի գրած ամէն վարդապետութիւներն ալ ճշմարտութիւն է, եւ Աւետարանը բոլոր քրիստոնեայներուն ընդունել տալու բաւական . *եւ մանաւանդ ոմանք

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՎ: Ուրեմն այլ է սուրբ Հոգին, եւ այլ ճշմարտութեան Հոգին . եւ ասոնք Աստուածութեան տարբեր անձեր են . (անտարակոյս, իր գրուածքը անանկ կ'հասկցունեն) անանկ է նե Հայրը ու Արդիւն ալ մեկ տեղ թուելով չորս անձն՝ այսինքն չորրորդութիւն կ'ըլլայ . փոխանակ՝ որ երրորդութիւն էր, եւ է միշտ: Իսկ արդ՝ ո՞ր հերեօնիստապետին քարոզութեանցը կ'համեմատի իր վարդապետութիւնները, թո՞ղ ինքնին ընտրէ իրեն նմանող վարդապետ մը, ու իրեն պատուանուն մը, որոնց մէնք անկարող կ'ըլլանք:

*Մանաւոր դիտողութեան արժանի բերան մըն է նաեւ բողոքողներուն մերթ զմերթ կամ մանաւոր ոմանց սովորաբար գործածածնին, եւ անանկ բերան մը՝ որ հեթանոսք եւ Հրէայք հազիւ կ'յուսային իրենց համար օրինաւոր ըլլալը: Այս ինչ ազգին մէջ՝ «Աւետարանը» քարոզուեցաւ . ըսել է որ՝ արդէն անոնց մէջ Աւետարանը չ'էր քարոզուէր, ու նոր կ'քարոզուի: Կամ, Այս ինչ ազգէն՝ այս ինչ ընտանիքը կամ անհատը՝ «Աւետարանը ընդունեց» անկէջ առաջ ընդունած չ'էր . առնոյ կ'ընդունի: Եւ այս կերպ խօսուածք մը լսուածին պէս՝ իսկոյն պէտք է իմանալ՝ որ Հայ մը՝ կամ Հոգվեման մը եւ կամ հեթանոս ու Հրէայ մը բողոքական է եղէր . եւ բողոքականութենէ ՚ի Հայ կամ ՚ի Յոյն դարձողները՝ Աւետարանը ուրացած են: Արդեօք բոլոր քրիստոնեից Եկեղեցիները ինչ կ'քարոզուի, քրիստոսի Աւետարանը, չ'ենէ, Երբայական Թալմուտը, Ասոր պատասխանին կ'սպասենք:—

ալ մարգարէութիւն: Ս ասն որոյ՝ սա մէկ
 գուշակութիւնն ալ՝ եթէ չ'եմ սխալիր ,
 ճշմարիտ ու իրաւ է . «Մեկնութիւն գրող
 »մը թէ եւ շատ հանճարեղ՝ ու մեծ մը
 «տաղրութիւն . ըրած կրնայ ըլլալ ալ
 »նէ , դարձեալ սխալմունքներու մէջ իյ-
 »նարու ենթակայ է » : (երես Գ) . Եւ այս
 խօսքերը որո՛ւ վրայ մեկնուիլը գտնալու
 համար՝ ընթերցողս շատ չ'եմ աշխատցը-
 ներ , թէպէտ եւ ինքնին ալ բացայայտ
 կ'տեսնուի : Եւ իմ կարծիքս կ'հաղորդեմ
 անոր , եւ թո՛ղ ինքնին վճիռ տայ իմ ճշ-
 մարիտ զրոյցիս .

«Մատթէի աս մեկնութիւնը գրողը՝
 »թէ եւ շատ հանճարեղ է եղեր , եւ մեծ
 »մտաղրութիւն ալ բանեցուցեր է , բայց
 »սակայն՝ սուրբ Հոգւով չ'ըլլալուն հա-
 »մար՝ չարաչար սխալեր է » : Իմ կարծիքս
 աս է :

Արդ՝ հրաւիրե՛նք հիմայ Անկլիքան Ե-
 կեղեցին՝ որ ինքնին համոզէ իր կրօնակից-
 ները՝ որ Աւետարանին ուզածնուն պէս
 մեկնութիւն տալով՝ խոստովանութիւնը
 չ'ուրանան . վասն զի չ'է թէ չ'ընդունելի՝
 այլ նաեւ հարկաւոր ալ է . ո՛չ միայն ա-
 ոողջներուն , այլ եւ հիւանդներուն :

Անդղիացի քահանայ մը որ եւ իցէ
 հիւանդի մը այցելութեան գացած ատեն՝
 « Հիւանդը պիտի յորդորուի իր Ռէզերու-ն
 » համար Տասնա-որ խոստովանութի-ն ինչ ընե-
 լու- » . . . (Վիրք հասարակաց աղօթից . . .
 Անդղիոյ եւ Իրլանտիոյ սովորութեանցը .
 Երես 400)

— Վուցէ՛ աս ըսած խօսքերնուս դէմ
 պիտի բարկանայ մեկը , եւ ամէն կերպ
 կշտամբանօք « մեղքը 'ի ծածուկ քահա-
 » նային խոստովանիլը Աստուծոյ խօսքին՝
 » դէմ բան է » * ըսելով պիտի յանդիմանէ

* Աս խօսքերուն լիովին պատասխանը կրնաս գտնալ
 ասկից առաջ զուրցածներնուս մէջ: Եւ հիմայ հոս՝
 « Հերքումն մոլարդութեանց » . . . անուն տեստին մէջ
 պարունակուած սա խօսքն ալ յառաջ բերենք .
 « . . . մեղաց խոստովանութիւնը քիչ շատ հրապարա-
 » կաւ ալ ը լլալու է . այսինքն՝ ըստ իմիք մեր ընկերնե-
 » րուն առջին ալ պէտք է խոստովանիմք մեղքերնիս » .
 — Արրեօք իրենք սա հրապարակիան խոստովանութի-նը իը-
 նէն իոր , ո՛ր , է- ԲԵԲ . իրենց Դրո-Ւեանը հախտով չ'ի գար
 իոր սա վարդապետութեանը: ԶԱՐԾԱՆԱԼԻ՝ ՀԱԿԱՍՈՒ-
 ԹԻԻՆ: — « Ըսել չ'եմ ուզեր քահանայի մը առջեւ ա-
 » ռանձնակի , — (Արրեօք ինչ Ռէզ ի՛ծնի ասկէ) — հապա
 » մեզ ճանչցողներուն: Եւ անոնց ալ բոլոր գաղտնի
 » մեղքերնիս մի ըստ միօջէ թուել ու տեղն 'ի տեղը գիտ-
 » ցընելը վրանիս պարտք դրուած չ'է՝ քահանային խոս-
 » տովանանք ըլլողներուն նման » (Տես 'ի Հերքումն
 մոլար դրութեանց Երես 47)

Անշուշտ՝ սա վարդապետութիւնը իրենց Աւետա-
 րանէն սորված պիտի ըլլայ: Ասանկ ըրին հաւտաց-

մեղի: (տես Քրիստիանոսի նկատման ան ու ա-
տեթիւն զուհուրի» կոչուած տետրին
մէջ. երես 81: եւ ՚ի Հերքումն մուր դը-
րութեանց. . . դրեթէ մեծ մասին մէջ) —

Բայց թէ որ ցամկոտ լուտեր հիմայ
ողջ ըլլար՝ զայրապին չ'պիտի յանդիմանէր
աս խօսքերս զուրցող իր հետեւողները .
թերեւս չ'պիտի նզովեր ալ . որովհետեւ
խոստովանութիւնը եւ արհաւիրման շրջանը այն-
չափ հարկաւոր է՝ որ «Քահանայ չ'եղած
» տեղը (աս պէշ իր խելին չ'իյարժ ինչ հով-
» իշեր է) նոյն գործքը կին եղեր է, տղայ
» եղեր է, նոյնպէս կրնայ կատարել» (Քա-

եալներէն շատերը՝ (որոնք Տէր Աւետարանին մէջ գրու-
ուած են) . Առաքեալներուն խոստովանած ատենին . չ'է
նէ՝ «Իրենց ըրածները (եւ ոչ ըսել ուղածները) կ'սոս-
» տովանէին» . եւ ասի կ'իմանամք որ՝ (գուցէ մեղքեր-
նուն մէկ մասը պահել հարկ ըլլար նէ՝ ասոնք պէտք էր պա-
հէին, եւ իրաւունք ալ կ'ունենային) «կախարդական բա-
» նի հետեւողներուն շատերը գիւքերնին կ'բերէին՝
» ամենուն անջին կ'այրէին» . . . (Գործ 19 . 18 — 19)

Աս շատերը, բառին վրայօք կրնայ մէկը ծուռ մէկ-
նութիւն մը տալ, ինչպէս որ կուտան ալ . «շատերը՝ եւ
» ոչ ամէնը» ըսելովէ Բարի . բայց ես ալ կ'ըսեմ որ կա-
խարդութիւնը Արարելը թողելով զի-ին երկրպագութիւն
ճառագանջել ըլլալով, հրապարակապէս խոստովանութեան կա-
րօք էր: Յովհաննու խոստովանութեան մէջ ալ մեղաց
աստիճանները՝ կամ խոստովանելու արժանի մեղքերը
որոշուած չ'են . ընդհանրապէս «իրենց մեղքերը» ըս-
ուած է . այսինքն . բոլոր մեղքերնին: —

րող ապաշխարութեան վրայ . գործք Լու-
տերի Գերմաներէն . հատ Ա . 66 . թիւ 8 , 9 :
Իսկ մենք Վիեննա տպուած Հայերէն պատ
մութեանէն քաղած ենք . տես երես 29) :
(Թէպէտ եւ ետքերը՝ ինքնին ալ իրէն հա-
կառակեցաւ՝ սարսափելի եւ սարառելի
կերպիւ . որուն չ'է թէ իր հետեւողները ,
այլ նաեւ՝ գուցէ՝ հեթանոսք անգամ չը
հաւնին : « Հաստատութեամբ հաւատան որ
արձակուած ես , եւ ստուգիւ արձակուած
» կ'ըլլաս , . . . զըջո՞ւմ ինչպէս որ կ'ուզէ նէ
» ըլլայ » : (Մեղ Գերմ . 78 . բ . թիւ 19 . եւ
Հայերէն 30) Բայց այս խօսքերը՝ ըսած
ատեն բաւական լուսաւորած էր) :

Ասոր գործակից կ'ըլլան հիմայ իրեննե-
րը՝ ըսելով . Իէ որ Բահանայ* Տեղաց Բո-
ղո-Բի-ն գալո- իշխանո-Բի-ն ո-նին՝ ո-րէ-ն
« Արարիչը 'ի կախ ըսուած ցաւալի վիճա-
» կին մէջ մնալով՝ Բահանային գործողու-
» թեանը կ'սպասէ : Վ երջը՝ թէ որ երբե-
» մըն չ'ուզէ Բահանան արձակում շնոր-
» հել* , մեր Ստեղծողը ոչ թէ միայն եր-

* Իրաւցնէ՝ կ'պատահի երբեմն՝ բայց շատ քիչ անգամ ,
որ Հայրց Եկեղեցականները արձակումն չ'են կարգաւ
խոստովանողին վրայ . բայց չ'է թէ իրենց կամքերնուն
պէս , հասկա՝ Աստուծոյ , որ յայնմած է սուրբ Տառե-
րով : Եւ ասիկայ ինչ պատճառներով ինչոր ըլլալը հաս-

» կար պիտի սպասէ , այլ ձախորդութեամբ
» երբեմն ալ 'ի զուր սպասած պիտի ըլլայ »
... : (Հերքումն . . . երես 7)

Աս խօսքերուս՝ թող իր համադաւան-
ները պատասխանեն . « Անկլիքան Եկեղե-
» ցին 'Արձակման, համար կ'հաւատայ թէ՛
» քահանայն իշխանութիւնն է- հրաման ունի
» Աստուծոյ՝ զըջացողներուն մեղաց լողո-
» լիւնն զրոյցելու է- կամ հրապարակելու .
» բայց աս զօրութիւնը իբր իր կողմանէ

կրնալու համար՝ աւելի մեծ դիտողութիւն մը ընելու էր
այդ վարդապետը՝ քան եթէ այնչափ ծաղրական կեր-
պով մը կշտամբանքներ կարդար : (Ասոր պատասխանը
վերջերը ապաշխարութեան վրայ խօսած տեղերնիս կը
գտնուի) : Գանք որ՝ նոյն իսկ հեղինակը ուրիշ երեսնե-
րու վրայ ալ կ'ըսէ . « Անշուշտ Աստուած չ'սպասեր ու
» նայիր՝ որ քահանան իր արձակումն առնելով գայ եւ մտնէ
» դարձի եկող անառակին ու իր մէջ տեղը : Մեր կողմա-
» նէ հաւատքը եղածին պէս՝ իսկոյն ետեւէն կուգայ
» Ասոր կողմանէ ալ արդարացնելը . ասանկ՝ քահանան
» դեռ իր գործողութիւնը չ'սկսած բանը կ'լմնայ :
» Եւ ներումը անգամ մը Աստուծոյ առնուելէն ետեւ՝
» ալ քահանային հաւանութեան վճռոյն կարօտութիւն
» չ'ուենեար վաւերական ըլլալու համար : » . . . (երես
5-6)

Հիմայ ասոր շատ պարզ , ու շատ անգամ ալ կրկնու-
ած՝ դիւրին խօսք մը ունիմ ընելիք : Ի բոլոր սրտէ՝ 'կա-
մենալը, ու 'կատարելը, միեւնոյն բաներ ըսել չ'են մի :
Ամբ բացայայտ զրուցենք . ողորմութիւն տալու սրտանց
փափաքող մէկը՝ որ չ'ուենեալով չ'տար , եւ միւս մը՝ որ
ուենեալով կուտայ . ասոնք երկուքն ալ միեւնոյն բանը ըրած
կ'համարուին Աստուծոյ առջին՝ չ'է նէ՛ն՝ : Օրինակի

„ի գործ դնելու չէ՛ , հասցա Քրիստոսի
 „իրք մէկ փոխանորդը , եւ Արձակումը
 „ամենեւին մէկ զօրութիւն չ'ունի՛ երբ
 „որ ընդունողը անգեղջ ըլլայ , եւ Քրիստո-
 „սի վրայ ճշմարիտ ու անկեղծ հաւատք
 „մը չ'ունենայ” : (“Անկլիքան Եկեղեցի
 „եւ անոր հնութիւնը” . . . կոչուած տետ-
 ըին մէջ . երես 50—51) Անգղիական Եկե-
 վեցին հրապարակական խոստովանութիւն
 եւ արձակումն ալ ունի . (Տես “Գիրք հա-

աղագաւ : Աբրահամ մեր հայրը՝ Իսահակ իւր որդին
 զոհելու տարաւ ու չ'ըրաւ , զոհած չ'համարուեցաւ :
 Անոր զաւակունքը՝ որ Մովսիսեան օրինօք պատարագ-
 ներ կ'մատուցանէին՝ վասն մեղաց , եւ հաստատ կ'հա-
 ւատային , որ մեղաց համար նուիրեալ պատարագը՝ բա-
 ւական էր զիրենք սրբելու , (ներգործական մեղքե-
 րեն) : Արդեօք հաստատ կամեցողութեամբ նոյն զոհը
 ընել ուզէնուն՝ չէ՞ր թողուէր անոնց մեղքերը իրենց
 երկնային Հօրերնուն քով : Է՛յ ալ ի՞նչ պէտք էր քահա-
 նային՝ արունները ձեռքը առած սուրբ սեղանը մտնել :
 Վամ սանկ ըսենք : Բնաւ , եւ ամենեւին աղքատ Հրէայ
 մը՝ անտարակոյս ենք որ մեղանչած ըլլայ , իր մեղացը
 համար պատարագ չ'մատուցանելուն համար կորսուած
 է՝ թէ որ սրտի մտօք եւ հաստատուն կամքով մատու-
 ցանել ուզէր չ'է՛կրցած : Ասիկայ կ'առարկեմ՝ մոլար
 կարծուած դրոս թեանց Հերքիչին , որ աս խնդիրս՝ լու-
 ծէ : Եթէ կ'փրկուի պիտի ըսէ նէ՝ թո՛ղ չ'ըպատասխա-
 նէ , որովհետեւ՝ անով՝ իր տրամաբանութիւնը պիտի
 ջրեմ . եթէ ո՛չ՝ թո՛ղ պատճառ մը ու վկայութիւն
 ցուցնէ . որով ալ դարձեալ իր մէկ դրութիւնը պիտի
 ջրեմ : —

սարակաց աղօթից» . . . երես 3-4 եւ 22
 23 եւ այլն) եւ անոր պաշտօնեայն՝ ական-
 ջալու-ր խօսովանո-թենէ մը ետքը արձակու-
 մը ասանկ կ'զրուցէ .

«Մեր Տէր Յիսուս Քրիստոս , որ իր
 » Եկեղեցիին իշխանութիւն իողո-ց անկէղծու-
 » թեամբ չըջացողները եւ իրեն հասարացող
 » Տեղա-որները արձըլելու , իր անբաւ ողորմու-
 » թեամբը թողութիւն շնորհէ քու ամէն
 » մեղքերուդ . եւ իր ինձի փո-ած իշխանու-
 » թիւնովը *եւ կ'արձըլի՛՛՛՛՛ թե չո- ասէն Տեղե-
 » լիք , Հօր , եւ Որդւոյ , եւ Սուրբ Հոգ-

*Աս իշխանութիւնը՝ Անկիւքան Եկեղեցիին բոլոր քա-
 հանայներուն ալ կ'արուի՝ իրենց ձեռնադրուելու ասեն-
 նին՝ այսպէս . «Ձեռնադրուելու անձինքները խոնար-
 » հութեամբ ծնրագրած , Եպիսկոպոսը ներկայ գտնուող
 » քահանայներուն հետ մեկ տեղ ձեռուրնին զատ զատ
 » քահանայութեան կարգը ընդունողներուն ամէն մե-
 » կուն գլխուն վրայ» գնելով , Եպիսկոպոսը կ'ըսէ . «Ըն-
 » դունէ՛ Սուրբ Հոգին՝ քահանայութեան Պաշտօնը եւ
 » Մատակարարութիւնը կատարելու Աստուծոյ Եկեղե-
 » ցիին մէջ , որ հիմայ մեր ձեռնադրութեամբը քեզի
 » կ'յանձնուի : — (Աս խօսքերս պիտի պատանձեցնեն
 » նաեւ ան բերանը՝ որ կ'ըսէ թէ Սուրբ Հոգին Տար-
 » իանց կ'աճի՛ն կ'հնազանդի՛ն) — «Որուն Տեղքը որ արձըլի՛ն՝ ար-
 » ձըլի՛ն՝ ա՛ծ ըլլայ . եւ որուն մեղքը որ կապէս՝ կապուած
 » ըլլայ : Եւ հաւատարիմ տնտես եղի՛ր Աստուծոյ պատ-
 » գամներուն եւ իւր սուրբ խորհուրդներուն . Հօր , եւ
 » Որդւոյ , եւ Սուրբ Հոգւոյն Անուամբը , Ամէն : » (գիրք
 հասարակաց աղօթից . . . երես 731) —

”ւոյն անուամբը . Ամէն” : Գիրք հասարակաց աղօթից . . . Երես 400)

Լուտեր ալ ասանկ սորվեցուցած էր ‘օղորմեացի, կարդալ’ . Ինչ լուսնիւն եղած ատեն .

“Աստուած ներէ՛ քու մեղքերդ . եւ
”հաւատքի մէջ հաստատ պահէ՛ քեզ ,
”Ամէն” : Եւ քահանայն մտերմաբար հարցնելու պիտի պարտաւորէր խոստովանանք ըլլողին՝ թէ “ Հիմա կ’հաւատաս որ իմ
”տուած թողութիւնս Աստուծոյ թողութիւնը ըլլայ” . հոս՝ թէ որ “Այն կ’հաւատամ” պատասխանը առնելու ըլլար՝ նոյնպէս պիտի պարտաւորէր զրուցելու . “ Ինչպէս որ կ’հաւատաս նէ՛ թող անանկ
”ըլլայ քեզի . ու ես մեր Տէրոջը Յիսուսի
”Քրիստոսի հրամանաւը թողութիւն կուտամ քու մեղքերուդ , Յանուն Հօր եւ
”Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . Ամէն . գնան
”խաղաղութեամբ” : (Քրիստ . Լուտ . Երես 35)

Այսչափ մը կարճ ՚ի կարճոյ խոսելով խոստովանութեան եւ արձակման վրայօք , անոնց՝ իրենց մէջ՝ ու մեկլմեկուսի , եւ մեր իրենց հետ ունեցած տարբեր եւ տարբեր կարծիքներնիս ցուցնելու սեպքը ,

քանի մը խօսք ալ Ապաշխարանք քաշելու
վրայօք խօսելու որ ըլլանք՝ կարծեմ դեռ
չ'պիտի ըլլայ . մանաւանդ որ անհրաժեշտ
հարկաւորութիւն մը կ'ըլլայ մեզի 'Ապաշ-
խարանք, անունով հիմակուան ժամանակս
ի գործ դրած եղանակներնիս ցուցնելու ,
որոնք անանկ միջոցներ են՝ որ թէ որ չ'ըլ-
լան՝ ամրակառօյց պարիսպներու պէս փրկ-
կուէ դէմ կ'դնեն , արդեւք կ'ըլլան մեղա-
ւորին՝ քի ձրի պարգեւները ընդունելու :
Այեղեցւոյ պաշտօնեայները՝ բնաւ չ'են
մատակարարէր սուրբ խորհուրդը ան ա-
մէն խոստովանողներուն՝ որոնք պէտք եղած
ու իրենց զրուած սպաշխարանք չ'են քաշելու
Պուցէ՛ աս ըսածներնիս՝ ճշմարիտ քրիս-
տոնէութեան եւ քրիստոսի վրայ կենդա-
նի հաւատք մը ունենալով՝ շնորհիւ Տեառն
մերոյ փրկուելու վարդապետութեան դէմ
երեւնայ քանի մը մեզնէ տարբեր քրիս-
տոնեայներուն . բայց սակայն կ'աղաչեմ
իրենց որ մինչեւ որ խօսքիս վախճան մը
տամ նէ՝ համբերող եւ երկայնամիտ ըլ-
լան . որ թէրեւս ներող ալ պիտի ըլլան աս
վարդապետութեանս . եւ չ'եմ կարծեր՝ որ
ասիկայ իրենց մէջ ալ անընդունելի , հեր-
քելի , եւ քի Նկեղեցիէն հալածուելու ար-
ժանի վարդապետութի մը համարուած ըլլայ :

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻԻՆ

“ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ” ԱՆՈՒՆՈՎ

ԳՈՐԾԱԾԱԾ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Բոլոր «ծոյլերուն եւ անհաւատներուն»
»սպաննողներուն» ու կախարդներուն եւ
»կռապաշտներուն» ու դեղ տուողներուն»
»եւ բոլոր սուտ զրոյց ամբարիշտներուն»,
որոնց բաժինը կրակով ու ծծումբով այ-
րած լճին մէջն ըլլալու է՝ (յայտ. 21. 8)
աս ապաշխարանքները կ'դրուին՝ իրենց
մեղքերը խօստովանելուն,

Աղօթել հանապազ . (յստուածայինա ծոյլ եղող-
ներուն)

«Պէտք է ամէն ատէն աղօթք ընել ու
»չ'ձանձրանալ: . . . Ուստի ալ արթուն
»կեցէք՝ ամէն ատէն աղօթք ըրէք, որ արժա
»նի ըլլաք ան բոլոր ըլլալու բաներէն ազա-
»տուելու, եւ Որդւոյ մարդոյ առջեւը կայ-
»նելու» . (Ղուկ. 18. 1, եւ 21. 36) «Նե-
»ղուծեան համբերեցէք . աղօթքի ստեպ
»կացէք» (Հռոմ. 12. 12) «Շարունակ ա-
»ղօթքի, ետեւէ եղիք . անոր մէջը արթուն
»մնալով գոհութիւնով: (Սողոս . 4 . 2)
«Մեղադար աղօթք ըրէք: Մէն բանի մէջ
»գոհութիւն տուէք . ինչու որ աս է Աս-
»տուծոյ կամքը Բրիտանա Յիսուսով ձեր

”վրայ” : (Ա. թ. ես. 5. 17—18) “Ամէն աւ-
”ղօթքով ու խնդրուածքով ամէն ատեն
”աղօթք ըրէք Հոգուով, ու անբանին վրայ
”հսկեցէք բոլորովին համբերութիւնով ու
”աղաչանքով՝ ամէն սուրբերուն համար,
”(ինձի համար ալ. որ ինձի խօսք տրուի
”երբոր բերանս բանամ, համարձակ ցու-
”ցնեմ Աւետարանին խորհուրդը)” (Ե-
փեա. 6. 18—19)

Միշտ գոհութիւն մատուցանել Աստուծոյ. (գլխ-
գոհներուն)

“Ամէն ատեն ամէն բանի համար գո-
”հութիւն տուէք Հօրը ու Աստուծոյ՝ մէր
”Տէր Յիսուս Քրիստոսի անունովը” :
(Եփեա. 5. 20) “Ամէն ինչ որ կ’ընէք խօս-
”քով ու գործքով, բոլորը Տէր Յիսուսին
”անունովը ըրէք. գոհացող եղիք Աստուծ-
”մէ ու Հօրմէն Անով” : (Վորոս. 3. 17)
“Ամէն ժամանակ Տէրը պիտի գովեմ.
”Անոր գովութիւնը միշտ իմ բերանս պի-
”տի ըլլայ” : (Սաղ. 34. 1) “Անոր համար
”մենք ալ. . . չ’ենք դադարիր ձեզի հա-
”մար աղօթք ընելէն. . . որ դուք Տէրոջը
”արժանի ճամբուն մէջ քայլէք. . . Գո-
”հանալով Հօր Աստուծմէն” , . . . (Վո-
րոս. 1. 9—10—12)

Խոնարհ ըլալ. (Մեծասիրտներուն)

“Տէրը իր ժողովուրդին կ’հասնի . խոնարհները փրկու թիւնով պիտի փառաւորէ” (Սաղ . 139 . 4) Տէրոջը առջեւը խոնարհեցէք , ու ան ձեզ կ’բարձրացընէ” (Ճակ . 4 . 10) “Ամէնքդ ալ մեկզմեկու հետ խոնարհութիւն ունենայք . ինչու որ Աստուած ամբարտաւաններուն դէմ կ’կենայ , խոնարհներուն շնորհք կուտայ : Աստուծոյ հզօր ձեռքին տակը խոնարհեցէք , որ ձեզ ժամանակին բարձրացնէ :” (Ա Պետ . 5 . 5—6) Խոնարհութիւնով մեկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք :” (Փիլիպ . 2 . 3)

Իրեն դէմ եղած յանցանքը ներել . (ամենուն)

“Բւ երբոր աղօթքի կ’կայնիք՝ ներեցէք թէ որ մեկուն դէմ բան մը ունիք . որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է , ներէ ձեզի ձեր յանձանքները : Բանզի թէ որ դուք չ’ներէք , ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է , չ’ներեր ձեզի ձեր յանցանքները :” (Մարկ . 11 . 25—26) “Ուստի ինչպէս Աստուծոյ ընտրեալները՝ սուրբերու սիրելիներ՝ վրանիդ հագէք գուժը . . . իրարու ներելով , իրարու թողութիւն տալով՝ թէ որ մէկը մեկումը դէմ տրուտունջ մը ունենայ . ինչպէս որ Աստուած

” Բրիստոսով ձեզի թողութիւն տուաւ ,
” անանկ ալ դուք ” : (Աողոս . 3 . 12—13)
“ Մեկզմեկու հետ անոյշ եղիք , գթած ,
” ներելով մեկզմեկու , ինչպէս որ Աստ-
” ուած՝ Բրիստոսով ներեց մեզի ” : (Եփես .
4 . 32)

Ըրած վնասը հատուցանել . (ամէնուն)

“ Ըրած մեղքերը խոստովանի . ու գը-
” լուխը (ամբողջ գողունին) հատուցանէ
” փոխանակ յանցանացը . նաեւ երրորդ
” մասն ալ աւելցնէ անոր վրայ ու անոր
” տայ՝ որուն դէմ յանցանքը գործեց ” :
(Թուոց . 5 . 7)

Բոլոր մեղքերը մեկդի ձգել . (ամէնուն)

“ Սուտի դուք ալ մեկդի թօթուեցէք
” ան ամենը . բարկութիւնը , սրտմտութիւ-
” նը , չարութիւնը , հայհոյութիւնը , խեղ-
” կատակութիւնը ձեր բերաններէն , իրա-
” րու սուտ մի զրուցէք . հին մարդը իր
” գործքերովը ձեր վրայէն հանեցէք ” . (Աո-
ղոս . 3 . 8—9) “ Սրեմն մեկդի ձգելով
” ամէն չարութիւնը ու ամէն խաբէու-
” թիւնը՝ ու կեղծաւորութիւնները , եւ
” նախանձը ու ամէն չարախօսութիւնը ,
” նոր ծնած երախայներու պէս՝ բանական
” ու անխարդախ կաթին փափաքեցէք ” :
(Ա Պետ , 2 . 1—2) “ Ստութիւնը մեկդի

„ձգեցէք . . . Բարկանաք նէ՛ մեղք մի՛
 „գործէք . արեւը ձեր բարկութեանը վրայ
 „մարը չ'մտնայ : . . . Ան որ գողութիւն կ'ը-
 „նէր , ալ թող չ'գողնայ . . . Ամենեւին
 „տգեղ խօսք մը ձեր բերնէն չ'ելլէ . . .
 „Ամէն լեղիութիւն ու բարկութիւն՝ ու
 „սրտմտութիւն՝ եւ աղաղակ՝ ու հայհոյ-
 „ութիւն վերցուի ձեզմէ ամէն չարու-
 „թիւններով մեկտեղ ” : (Եփես . 4 . 25—
 26—28—29—31) “Ա՛յլի . . . կենաք
 „գուք պոռնկութենէն . . . ինչու որ Աստ-
 „ուած մեզ պղծութեան չ'կանչեց , հապա
 „սուք ըլլալու ” : (Ա . Թես . 4 . 3—7) “Աստ-
 „տի մե՛ք ալ՝ որ այսքան վկայներուն բազ-
 „մութիւնը մեր բոլորտիքը պատած ու-
 „նինք , բոլոր հպարտութիւնները մէկդի
 „ձգենք՝ եւ մեզի կցորդ եղած մեղքը ” :
 (Եբր . 12 . 1)

Մարմնաւոր փոփաքները սպաննել . (ամէնուն)

“Թէ որ հոգիով մարմինին գործքերը
 „սպաննէք , պիտի ապրիք ” : (Հռովմ . 8 .
 13) “Աստի ձեր երկրաւոր անդամները
 „սպաննեցէք . մէկդի՛ ձգեցէք պոռն-
 „կութիւնը , պղծութիւնը , աղտեղու-
 „թիւնը , չար բաներու ցանկութիւնը , ու
 „ազահութիւնը՝ որ կռապաշտութիւն է ” .
 (Սողոս . 3 . 5) “Անոնք որ Քրիստոսիններն

”են՝ իրենց մարմինը . խաչ հանեցին
”ԲՆԱԿԱՆ կիրքերով ու ցանկութիւններ
”րով մէկ տեղ” : (Գաղ . 5 . 24) :

Իւ անձը ուրանալ . (ամէնուն)

“Թէ որ մէկը իմ ետեւէս գալ կ’ուզէ՝
”Թող ինքզինքը ուրանայ , եւ իր խաչը առ
”նէ՝ ու իմ ետեւէս գայ” : (Մատ . 16 . 24)

Մարմինը ներել Աստուծոյ ուզածին պէս . (կամա
պաշտներուն , ու նաեւ ամէնուն)

“Անոնք որ Աստուծոյ կամքին պէս կը
”չարչարուին , իրենց հոգիները հաւատա
”րիմ Ստեղծողին թող յանձնեն քարի
”գործելով” : (Ա . Պետ . 4 . 19) Իմ մար
”մինս կ’նեղեմ՝ ու կ’հնազանդեցնեմ , որ
”չ’ըլլայ թէ՛ ես որ ուրիշներուն քարոզե
”ցի , ինչնիրենս խոտելի գտնուիմ : (Ա .
Սորն . 9 . 27)

Աստուծոյ ուզածին պէս տրամիլ . (ամէնուն)

“Արդ ուրախ եմ , չէ՛ թէ որ տրամե
”ցաք , հապա որ ապաշխարութեան համար
”տրամեցաք . որովհետեւ դուք Աստուծոյ
”ուզածին պէս տրամեցաք , անանկ որ մէկ
”բանով մը մեզմէ զրկանք չ’քաշէք : Ինչու
”որ Աստուծոյ ուզածին պէս եղած տրու
”մութիւնը՝ ապաշխարութիւն կ’գործէ
”փրկութեան համար՝ որ զղջանալու բան
”չէ : Աւստի նոյն բանը որ դուք Աստու

„ճոյ ուզածինսպէս տրտմեցաք, ձեր մէջը
„որչափ ջանք գործեց, կամ չքմեղու-
„թիւն” . . . (Բ կորն. 7. 9—10—11) “Թէ
„որ իր չարչարանացը կցորդ ըլլանք, անոր
„փառացնալ հաղորդ պիտի ըլլանք” (Հռով.
8. 17) “Շատ նեղութիւններով պէտք է
„մեզի Աստուծոյ թագաւորութիւնը մըտ-
„նել” : (Գործ. 14. 21)

Սգալ. (ամէնուն)

“Տառապանք քաշեցէք, սուգ ըրէք ու
„լացէք. ձեր խնդումը սուգի գառնայ, ու
„ձեր ուրախութիւնը տրտմութեան”
(Յակ. 4. 9)

Տերօջը գառնալ ապաշխարանքի պտուղներով. (մեղ-
քի մէջ ապրողներուն)

“Ու հիմայ ձեր Տէր Աստուածը կ’ըսէ.
„ինձի դարձիք ձեր բոլոր սրտովը. պահ-
„քով, ու լալով եւ կոծով” (Յովել, 2. 12)

Ամէն գէշ բաներէ ետ կենալ. (չարագործներուն)

“Եւ մէն բան փորձեցէք, աղէկը ընդ ու-
„նեցէք. ամէն գէշ բաներէն ետ կեցէք”
(Ա. Թէսաղ. 5. 22—23)

Համբերել. (անհամբերներուն)

“Եւ որ մինչեւ վերջը համբերէ, անիկայ
„պիտի ապրի” (Մատ. 24. 13) “Ձեր
„համբերութիւնովը հոգինիդ պիտի ստա-
„նաք” : (Հռով. 21. 19) “Թէ որ համբե-

»բենք՝ Անոր հետն ալ պիտի թագաւո-
»բենք» : (Բ Տիմ. 2. 12) «Լորանելի է ան
»մարդը որ փորձութիւններու կ'համբե-
»րէ» : (Յակ. 1. 12) «Լ'նոնք՝ որ բարի
»գործքերու մէջ համբերութեամբ կ'կե-
»նան, փառք ու պատիւ եւ անմահութիւն
»կ'խնդրեն, (Որոնք որ են) յաւիտենական
»կեանքերը» : (Հռովմ. 2. 7)

Հաւատարիմ ըլլալ մինչեւ 'ի մահ. (անհաւատարիմ եւ
զոհներուն)

«Մի վախնար ան բաներուն համար որ
»պիտի չարչարուիս մինչեւ 'ի մահ
»հաւատարիմ եղիր» (Յայտ. 2. 19)

Բարիք գործել. (ամէնուն, մանաւանդ աս բանս
ընելու ծուլացողներուն)

«Լ'ս աշխարհիս մէջ եղած հարուստ-
»ներուն պատուէր տուր՝ որ չ'հպարտա-
»նան. . . բարիք գործեն, բարի գործքե-
»րով հարուստնան» . . . (Ա Տիմ. 6. 17-
18) «Մի որ երկու հանդերձ ունի՝ մէկը
»թող չ'ունեցողին տայ. եւ ոմ որ կերա-
»կուր ունի՝ թող անանկ ընէ» : (Ղուկ. 3. 11)

Հաստատ յոյս ունենալ. (յուսահատեալներուն)

«Կ'բաղձանք որ ձեզմէ ամէն մէկը նոյն
»ջանքը ցուցնէ յոյսին հաստատուելուն՝
»մինչեւ վերջը» : (Եփր. 6. 11) «Լ'ն հա-

»մարձակութիւնը եւ յոյսին պարծանքը
»մինչեւ վերջը հաստատ բռնե՛նք
»ինչու որ մենք Քրիստոսի մասնակից ե-
»ղանք . միայն թէ ան հաստատութեան
»սկիզբը մինչեւ վերջը պինտ բռնե՛նք» :
(Անդ . 2 . 6—14) «(Յոյսը բնաւ ամօթով
»չ'ձգեր» : (Հռովմ . 5 . 5)

Ծոմ պահել . (ամէնուն մանաւանդ կամապաշտնե-
րուն)

«Իմ անձիս ծոմ պահելովը լացի , ու աս
»ինձի նախատինք սեպուեցաւ» : (Սաղ .
69 . 10)

Քահանայն մէկը խոստովանեցնելուն՝ իր
մեղացը համեմատ ուրիշ զանազան ապաշ-
խարանքներ ալ կ'դնէ իրեն՝ Աստուծոյ խօս-
քին նայելով : () որ օրինակ . թէ որ Աս-
տուծոյ ահաւոր Անունը զուր եւ սնտի ,
մանաւանդ սուտ տեղը բերանը առնելու ,
զանի վկայ կոչելու չար սովորութիւնը ու-
նեցող մէկն է խոստովանողը , իր առանձին՝
կամ եկեղեցեալ աղօթելու ատեններէն
զատ՝ բնաւ Աստուծոյ անունը բերանը
չ'առնել ապաշխարանք կ'դնէ անոր : Թէ
որ իր հայրը ու մայրը , կամ ազգը , որ ծը-
նողքը սեպուած է , անարգելու եւ անպա-
տիւ ընելու կ'յաճախէ , բարկութեամբ ,

հակառակութեամբ, հայհոյութեամբ, կրք-
 տամբանօք՝ թէ եւ իրաւունք ունենալով
 կամ չ'ունենալով ամենեւին հեղութեամբ
 վարուիլ կ'պահանջուի անկէ այնուհետեւ՝
 ամէնուն հետ, եւ ամէն հակառակութենէ
 ու վայրապար վիճաբանութիւններէ հե-
 ու ու կենալ: Թէ որ սպանութիւն է ըրեր՝
 թէ շնութիւն, թէ գողութեամբ, թէ կր-
 ուիւով, եւ թէ այլ ինչ պատճառաւ, գի-
 շեր ցերէկ աղօթից պարապելու եւ կրցա-
 ծին չափ մարմինը ճ'նշելու հարկաւորու-
 թիւն ունենալը կ'ճանուցուի իրեն, թէ
 ծոմապահութեամբ, թէ առ ժամանակեայ
 հրաժարմամբ ամուսնական պարտուց, եւ
 ամբողջ գողունին տերոջը դարձնելու պար-
 տաւորութիւնը կ'իմանայ Քահանայէն:
 Եւ որովհետեւ գողութիւնը ընդհանրաւ-
 պէս ազահութենէ կ'պատճառի, կամ հա-
 րստանալու ու աշխարհի զբօսանքները վա-
 յելելու փափաքէն, Քահանան կ'ըսէ իրեն՝
 որ շատ ողորմութիւններ տալու կ'պար-
 տաւորի աղքատներուն, (որպէս զի ազա-
 հութեան ոգին մարեցնէ իր սրտին մէջ)
 որով իր գանձը երկինքը կ'դիզէ: Եւ կ'ստի-
 պէ նաեւ շարունակ Եկեղեցի երթալով
 Աստուածային պաշտամանց ներկայ ըլլալ,
 եւ մեկզմեկու վրայ աղօթելու պարտաւո-

բուժիւնը . որ եւ ասով Աստուածպաշտու
թեան եւ եղբայրսիրութեան հուրը կ'ար-
ծարծէ իր սրտին մէջ .

Աւ թէ որ աս դրած ապաշխարանքնե-
րը չ'քաշէր , եւ կ' յաճախէ իր մեղքերուն ,
կ'խրատէ զինքը սիրով , ու կ' յորդորէ՝ որ իր
զղջման թողութիւնը՝ թերակատար ա-
պաշխարութեամբ եւ մեղօք յերկնից չը
կրնայ ընդունելը գիտնալով՝ ջանայ զանի
ձեռք ձգելու , եւ իր բոլոր սրտովը զղջա-
լով՝ իրմէն դուրս ՚ի շինութիւն եւ յուղ-
ղութիւն իր բարբին ապաշխարանքները
քաշէ , եւ հչ իբրեւ ասոնցմով գնոյ առ-
նելու համար իր վրկութիւնը : Աւ թէ որ
տակաւին անգեղջ կ'մնայ , ալ արձակում
ըսել տալը անկարելի է , թէ եւ ամբողջ
Հայք վրան թափին . որովհետեւ՝ ինքը չ'է
թողութիւն տուողը , այլ Աստուած՝ որուն
միայն միջնորդ մը կ'ըլլայ անոր վրայ աղօ-
թելով՝ եւ սատանային լուծէն արձրկե-
լով , յանուն Ամենասուրբ Երրորդութեան :

Աւ թէ որ միեւնոյն անձը շատ անգամ
միեւնոյն մեղքերը խոստովանելով , կամ
հերետիկոսական կարծիք մը յայտնելով
չ'զղջար ՚ի բոլոր սրտէ , իրեն սպառնացող
կորուստը իրեն կ'գուժէ . շատ անգամ խը-
րատելով զինքը այն ինչ կարծիքէն կամ

մոլութենէն ու մոլորութենէն հեռացնելու եւ օտարացնելու համար . եւ վերջապէս տեսնելով՝ որ ՚ի զուր կ'երթայ կոր իր ջանքը , եւ Եկեղեցին անոր պատճառաւ պիտի հայհոյուի , (որ անանկները՝ ուրիշներու պէս՝ սոսկապէս քահանային բերնէն ելած «կ'արձակեմ» բառէն՝ եւ ոչ իրենց սրտանց զղջալէն կ'կարծեն առնել մեղաց թողութիւնը) , կրկին կրկին ազդարարութիւն կ'ընէ իրեն՝ որ Եկեղեցին իր վերջին միջոցին ձեռք պիտի զարնէ , այսինքն , իր վերջին վճիռը պիտի հրատարակէ իրեն դէմ , զինքը խրատելու եւ իր «Մարմինը» սատկեցնելու համար , որ Հոգին փրկուի «Յիսուսի Բրիստոսի օրովը» : (Ա . Կորն . 5 . 50) Միայն ան դիտաւորութեամբ՝ որ զղջայ՝ ու դառնայ իր մեղքերէն : Եւ այս ստոյգ է որ՝ երբ դառնայ ու ըսէ «կ'ապաշխարեմ»՝ կ'թողուի անոր երկինքը՝ ու երկրի վրայ հրապարակաւ : Եւ ճիշդ՝ Պօղոսին ըրածին պէս (Ա . Տիմ . 1 . 20) անոր ալ կ'ընեն՝ թէ որ քահանային ու նաեւ Եկեղեցւոյ առաջնորդին ալ մտիկ չ'ընէ :

Վերջապէս քահանայն՝ ամէն ո՛վ եւ ինչ մեղքի Տէր մէկը խոստովանցնելուն կ'յորդորէ խոստովանողը որ աղքատներուն

ողորմութիւն տալու զանց չ'առնէ . «վասն
» զի անողորմ դատաստան պիտի ըլլայ (կ'ը-
» սէ) անոր , որ ողորմութիւն չ'ընէր . ինչո՞ւ
» որ ողորմութիւնը բարձրագլուխ կ'պար-
» ծենայ դատաստանին դիմացը : » (Յակ .
2 . 13)

Ահա ասոնք են Հայոց գործածած ա-
պաշխարանքները , նաեւ սուրբ գիրքերը
եւ յատկապէս Դաւթի Սաղմոսները կար-
դալը . եւ աս ամէն բան՝ չ'է թէ կարճ
միջոցի մը մէջ ըլլալով փրկութիւնը ծա-
խու առնելու համար կ'ըլլայ . եւ կամ
փրկութիւնը՝ ասոնցմով կ'ըլլայ , այլ՝ ասոնք
միայն մեր տկար եւ վատթար բնութիւն-
ներնիս ճանչնալու ցոյցերն են , որ կը ճանչ-
նանք մեղքերնիս ճանչնալով , եւ որոնցմով
միայն Քրիստոսի շնորհիւ թողութեանը
կ'ապաւինիմք : Աս բաներուն մեծ մասը
կարծեմ Անկլիքանք եւ բոլոր միւս բո-
ղոքողներն ալ անոր պէս կ'ընդունին . եւ
ուստի՝ իրաւունք ունենալ կը համարիմ՝
որ Հայոց Եկեղեցին աս արարողութեանս
համար ալ դատապարտելի չ'կրնար ըլլալ
քանի մը մասնաւոր Եկեղեցիներէ :

Ա երջ կուտամ աս կարճառօտ նամակ-
նուս խորին յարգանք աղաչելով մեր

Համազգի Եղբայրներուն , յորդորելով
 սիրովն Քրիստոսի եւ Եղբայրութեան ,
 որ ամէն հովի շարժմունքին մտաց առա-
 գաստներնին չ'դարձնեն անոր ուղղու-
 թեանը . այլ թողելով անոր կառավարու-
 թիւնը Ղեկաւար Սուրբ Հոգւոյն՝ որ ինքը
 միայն գիտէ աղէկ կառավարել եւ շակել
 մեր ճամբան՝ Արքունի պողոտային մէջ ,
 աղաչեմք ամենայն Թախանձանօք 'ի մի
 ձայն եւ 'ի մի բարբառ «Տէր Աստուած
 » մեր , մեզի խաղալութիւն տնւր» : (Եսայ .
 26 . 12) եւ « Զանալով Հոգւոյն միաբա-
 » նութիւնը խաղաղութեան կապովը պա-
 » հելու , » (Եփես . 4 . 3) ամէն խռովու-
 թիւններու առիթ եղող բաները՝ եւ թէ
 որ պատահի , ինչքերնիս եւ անձերնիս ալ զո-
 հենք միայն թէ Եկեղեցին խաղաղ ու հան-
 դարտ , եւ Երկնային կեանք մը՝ երկրիս վրայ
 վարելու կարող ըլլայ , Հօր՝ եւ Արդւոյ եւ
 Սուրբ Հոգւոյն շնորհքովը . . .

1852 . ՆՈՅԵՄԻԵՐ

Մ . Տ . Ս
 ԱՇԱԿԵՐՏ ՈՄՆ
 ՅԱՆՈՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԴՊՐՈՅԻԿ
 ՈՐ Ի ՅՕՐԹԱԳԻԻՂ



480P

2013

4645